Նարինե Բիոմոմիկներ **160** մգ

Դեղաձև. Հեստոցային մոմիկներ:

Բաղադրություն. Յուրաքանչյուր մոմիկ պարունակում է 4 մլրդ կենսունակ լիոֆիլիզացված կաթնաթթվային մանրէներ Lactobacillus acidophilus Er 317/402 Narine:

Դեղաբանական ազդեցություն

Նարինե բիոմոմիկները նախատեսված են հեստոցի միկրոֆլորայի լավացման համար, արդյունավետ պայքարում են բակտերիալ վագինոզի դեմ, վերականգնելով հեստոցի միկրոֆլորան և արտադրելով կենսաբանական ակտիվ նյութեր, որոնք մահացու են հիվանդության հարուցիչների համար:

Արտադրանքի մեջ մտնող կենդանի լակտոբակտերաները օժտված են անտագոնիստ ակտիվությամբ, լայն սպեկտորի պաթոգենների և պայմանական-պաթոգեն բակտերիաների նկատմամբ: Վագինալ էպիթելի գլիկոգենը նյութափոխանակում են մինչև կաթնաթթվի, որը պահպանում է հեստոցի PH 3.8-4.2: Կաթնաթթուն բարձր կոնցենտրացիաներով ստեղծում է անբարենպաստ պայմաններ թթվազգայուն պաթոգենների և պայմանական-պաթոգենների կենսունակության համար:

Կիրառման ցուցումներ

Հեստոցային դիսբիոզ, ներառյալ բակտերիալ վագինոզ, որպես անկախ միջոց կամ համալիր թերապիայի մաս:

Հակաբիոտիկներով, ցիտոստատիկներով, կորտիկոստերոիդներով, հակասնկային և հակավիրուսային դեղամիջոցներով թերապիայի ընթացքում և հետո:

Կանանց սեռական տարածքի ենթասուր և քրոնիկ բորբոքային պրոցեսներ:

Միզասեռական վարակների հատուկ թերապիայից հետո; (ուրետրիտ, ցիստիտ…):

Հղի կանանց նախածննդյան նախապատրաստում (հեստոցային դիսբակտերիոզի կանխարգելման և բուժման համար):

Պլանավորված ախտորոշիչ և բուժական գինեկոլոգիական վիրահատությունների նախապատրաստում;

Հակաբեղմնավորիչ միջոցներ օգտագործելիս (ՆԱՄ, ՀՕՀ, սպերմիցիդներ):

Հորմոնալկախյալ կոլպիտ, ծերունական և այլն՝ որպես անկախ միջոց կամ հատուկ հորմոնալ թերապիայի ֆոնի վրա:

Հակացուցումներ

Գերզգայունություն, կանդիդոզ:

Կիրառման ձև և դեղաչափում

Կանխարգելման նպատակով.

Կիրառել օրը 1 մոմիկ 5-7 օր:

Միզասեռական տրակտի բորբոքային պրոցեսներ.

Կիրառել օրը 1 մոմիկ 5-10 օր:

Հղիների մոտ հետտոցային սեկրեցիայի մաքրության խախտման դեպքում մինչև *III-IV* եռամսյակ.

1-2 մոմիկ 5-10 օր կամ մինչև կլինիկական ախտանշանների անետացումը:

Վերականգնողական թերապիա հակաբիոտիկների օգտագործումից հետո կամ դրա ընթացքում.

Օրը 1 մոմիկ 5-10 օր:

Կուրսը կարելի է կրկնել 3-4 ամիս հետո, 10-20 օր ընդմիջումով:

Կողմնակի ազդեցություններ

Ալերգիկ ռեակցիաներ:

Նախազգուշացումներ

Ցանկալի է օգտագործել երեկոյան, քնելուց առաջ:

Կիրառումը հղիության և կրծքով կերակրման կընթացքում

Հակացուցված չէ:

Պահպանման պայմաններ

Պահել օդի 0 ° C-ից մինչև 20 ° C ջերմաստիճանային և 65%-ից ոչ բարձր հարաբերական խոնավության պայմաններում:

Թողարկման ձև

2 խցիկ, 5-ական հատով, ստվարաթղթե տուփի մեջ:

Բացթողման կարգը

Առանց դեղատոմսի: